ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 օգոստոսի 2021 թվականի N 302-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 74-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 68-րդ հոդվածի 6-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատարի 2021 թվականի օգոստոսի 25-ի N 300 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի մարտի 12-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2021 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը հաստատելու մասին»* N 74-Ա որոշման N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2021 թվականի օգոստոսի 27**
**ք. Հրազդան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2021 թվականի օգոստոսի 27-ի N 302-Ա որոշման

«Հավելված N4
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2021 թվականի մարտի 12-ի N 74-Ա որոշման

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
## «ՆԱԻՐԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

